«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ Fax: +374 10 564111 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/582

«21» 04 2021 թ.

«ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ Ա.ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան,

Համաձայն 2021 թվականի փետրարի 25-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Արմիլ Գրուպ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված տնտեսական և սանհիգենիկ ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-10» պայմանագրի Ձեր ընկերությունը պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը՝ դիսպենսերի թղթե անձեռոցիկ:

Ըստ պայմանագրի մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մարտի 27-ին: Ապրիլի 12-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից Ձեզ տրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ՝ մինչև ապրիլի 16-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստով: Սակայն Ձեր կողմից մատարակարումը կրկին չի իրականացրել և բանավոր տեղեկացրել եք ապրանքի մատակարարումից հրաժարվելու մասին:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-10» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 25.02.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-10» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որաշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման գրությունը:

Առդիր 1 թերթ:

ՌԵԿՏՈՐ **Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

<< ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ,0025, Երևան, Կորյունի փ.2, հեռ. 011-621000-216

թիվ 274/147

«19» 04 2021թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան>> հիմնադրամի
ռեկտոր պարոն Ա. Ա. Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի և «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ - ի միջև 2021 թվականի փետրվարի 25-ին կնքված տնտեսական և սանիհիգիենիկ ապրանքների գնման N ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-10 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում, վաճառողը պարտավոր էր մինչև ս/թ մարտի 27-ը ներառյալ մատակարարել վերը նշված պայմանագրում ներառված ապրանքը ըստ տեխնիկական բնութագրի և գնման ժամանակացույցի: Սակայն ընկերության կողմից ապրանքը մինչ օրս չի մատակարարվել: Մասնավորապես 31-րդ չափաբաժին (թղթե անձեռոցիկ, դիսպենսերի – 1500 հատ):

Պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 12.04.2021թ. գրավոր սահմանվել է մատակարարման նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 16.04.2021թ.-ը ներառյալ, և դրա մասին պատշաճ ծանուցվել է պայմանագիր կնքած Ընկերությանը, սակայն Ընկերությունը չի կատարել նոր ժամկետով սահմանված պարտավորությունները և բանավոր հրաժարվում է ապրանքի մատակարարումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում եմ ձեռնարկել միջոցներ խնդրի կարգավորման նպատակով:

Վարչության պետ՝ Ս.Գ.Բարոյան

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОС. МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМ. МХИТАР ГЕРАЦИ
YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER MKHITAR HERATSI